




ԼԵՌՆԱՅԻՆ ՌԱՐԱԲԱԴԻ  
ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ



ԼՂՀ ՊԱՏԱԿԱՆ  
ԻՇԽԱՆՈՒԹՅՈՒՆ

No 3 # 2011

Լույս է տեսնում 2011 թվականից



## ԱՎԵՏԻՔ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

ԼՂՀ Նախագահի աշխատակազմի պետական վարչության  
իրավաբանական բաժնի 1-ին կարգի մասնագետ

## «ԼՂՀ ՀՌԴԱԿՄԱՆ ՄԱՍԻՆ» ՀՌԴԱԿԱԳՐԻ ԻՐԱՎԱԳԻՏԱԿԱՆ ԱՐԺԵՔՆ ՈՒ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ



2011թ. սեպտեմբերի 2-ին լրանում է «ԼՂՀ հոչակման մասին» Հռչակագրի<sup>1</sup> ընդունման 20-ամյակը, մի փաստաթղթի, որն իր մեջ ներառում է յուրաքանչյուր արցախցու իդեալները, ազատ և անկախ ապրելու բնական իրավունքը, համամարդկային մի շարք արժեքներ, ինչպես նաև այն պետության տեսլականը, որը պետք է կառուցվի Հռչակագրի ընդունումից հետո և որի հիմքում դրված Հռչակագրի սկզբունքները համահունչ էին թե՛ նորահոչակ պետության գաղափարախոսությանը, թե՛ ներկա իրողություններում պետության կողմից ընտրված ուղենիշին, որը հետագայում կոնկրետացվեց «ԼՂՀ պետական անկախության մասին» Հռչակագրում, իսկ այնուհետև նաև ԼՂՀ Սահմանադրության մեջ: Իրավական այս փաստաթղթին ժամանակի ընթացքում անդրադեմ են տարրեր ասպեկտներից, սակայն այն իրավագիտական լուրջ քննության առարկա, առանձին ուսումնասիրության օբյեկտ չի դարձել և տարիների հեռվից այն վերստին արժեվորելու և վերաբերմաստավորելու անհրաժեշտություն ունի:

Սույն շարադրանքի շրջանակներում համեստ փորձ կարվի անդրադարձնել Հռչակագրի իրավագիտական դերին ու նշանակությանը հատկապես ԼՂՀ-ի իրավական համակարգի ձևավորման ու զարգացման համատեքստում, ինչպես նաև ըստ արժանվույն գնահատել նրա իրավական արժեքը:

Արցախցիների համար անկախության և ազատության բարենպաստ մքննորդությունը ստեղծմանը նպաստել է մյուս քաղաքակիրք ժողովուրդների նման անկախության պայմաններում ապրելու բնական ծգումը, որը դարեր ի վեր եղել է օրախնդիր, բայց մշտապես գտնվելով որիշի ապօրինի տիրապետության տակ և հալածվելով անկախանալու հարցի բարձրացման համար, տեղի չի ունեցել այն պոռթկումը, որն ի վերջո սկզբնավորվեց 1988թ. և ժողովրդի ներկայացուցիչների՝ ժողապահավորների կողմից իրավական ձևակերպում ստացավ 1991թ. սեպտեմբերի 2-ին Հռչակագրի տեսքով:

Չնայած արցախահայությունն ընտրել էր անկախ ապրելու օրինական ճանապարհը և դրանով հանդերձ իր պատմական տարածքների մի մասի վրա նոր պետություն հոչակել ու սկսել նոր հասարակագի կառուցման գործնքացը, Աղբեջանը, չհանդուժելով երկրորդ հայկական պետության ծնունդը, դաժան ու լայնամասշտար ռազմական ազրեսիա է սկսել նորահոչակ ԼՂՀ-ի դեմ՝ խախտելով նաև ուժ կամ ուժի սպառնալիք չկիրառելու միջազգային իրավունքի սկզբունքը, որի արդյունքում միայն արցախահայությունը կարողացավ ձեռք բերել անկախություն, այն ել՝ արյան գնով: Հռչակագրի ընդունումից հետո անցել է 20 տարի, որի ընթացքում շատ իրադարձություններ ու գործընթացներ են տեղի ունեցել, սակայն չի փոխվել արցախցու օրինական և հաստատական նպատակները:

Հռչակագրեր ընդունելու մշակույթը կապված է մի կողմից նոր պետության կամ մարմնի ստեղծման, մյուս կողմից մարդու իրավունքների և ազատությունների հստակեց-



## ԼՂՀ դատական իշխանություն

ման ու ամրագրման, իսկ մեկ այլ կողմից իրավական այդպիսի փաստաթղթի միջոցով պետությանը՝ դրանք հարգելու, երաշխավորելու և պաշտպանելու հետ:

«Հռչակագիր» (լատիներեն declaratio բառից, որը թարգմանաբար նշանակում է դիմում, հայտարարություն, հռչակում<sup>2)</sup>) երևոյթին ժամանակի ընթացքում տրվել են տարրեր բնորոշումներ: Այսպես, մասնագիտական գրականության մեջ նշվում է, որ հռչակագիրը սահմանադրական իրավունքում առանձին բնույթի իրավաքաղաքական ակտերի անվանում է, որոնց միջոցով հայտարարվում է (հաճախ հանդիսավոր ձևով) ինչ-որ քանի մասին: 1) հռչակվում է նոր պետության ստեղծումը կամ նրա քաղաքական կարգի սկզբունքային փոփոխությունը (օր. 1776թ. ԱՄՆ-ի անկախության հռչակագիրը, ՌԽՖՍՀ պետական ինքնիշխանության մասին հռչակագիրը, ՌԽՖՍՀ մարդու և քաղաքացու իրավունքների և ազատությունների մասին հռչակագիրը և այլն), 2) հռչակագրի ձևով հաճախ հռչակվում են մարդու իրավունքներն ու ազատությունները (1789թ. օգոստոսի 26-ին սահմանադիր ժողովի կողմից ընդունված մարդու և քաղաքացու իրավունքների ֆրանսիական հռչակագիրը, 1991թ. մարդու իրավունքների և ազատությունների ոռուական Հռչակագիրը և այլն)<sup>3)</sup>: Իսկ մեկ այլ բնորոշման համաձայն, այն միջազգային իրավունքում հանդիսավոր ակտ է, որը համաձայնեցված կողմերի միջև ձևավորում է ընդհանուր սկզբունքներ և նպատակներ, չունի պարտադիր ուժ, սակայն բացառություն է կազմում 1948թ. Մարդու իրավունքների համընդհանուր Հռչակագիրը, որը ստորագրվել ուժով ձեռք է բերել պարտադիրություն պետությունների համար<sup>4)</sup>:

Բազում ժողովուրդների գարգացման շրջադարձային ժամանակահատվածներին բնորոշագրական է հռչակագրերի ընդունումը, որոնք իմանավորում են ժողովրդի կողմից կատարվող քախտորոշ քայլի անհրաժեշտությունը և ուղիներ են նշում հետագա գարգացման համար<sup>5)</sup>: Պատմությանը հայտնի են մի շարք հռչակագրեր, որոնք իրենց արդիականությունը չեն կրցրել մերօրյա սահմանադրական գարգացումների հոլովույթում, այլ ընդհակառակը, շատ հաճախ արդի պայմաններում ինչ-որ իմստիտուտ կամ նորմ հիմնավորելու կամ նրա ակունքները գտնելու նկա-

տառումով անդրադարձ է կատարվում հենց այդ փաստաթղթերին: Այս համատեքստում փորձ կարվի անդրադառնալ ԱՄՆ-ի անկախության հռչակագրին, ինչպես նաև համեմատական լույսի ներքո գուգահեռներ կանցկացվեն Աղբեջանի «պետական անկախության վերականգնման մասին» հռչակագրի և ԼՂՀ «Հռչական մասին» Հռչակագրի միջև, վեր կանոնի վերջինս արժեքն ու տարիների ընթացքում ունեցած դերակատարությունը: ԱՄՆ-ի անկախության հռչակագրին առնչվող որոշ պատմական անցքեր ու մանրամասնություններ ներկայացնելու նպատակներից մեկն էլ այն է, որ այն, լինելով եզակի իրավագիտական արժեք ունեցող փաստաթուրը, ժամանակի ընթացքում օրինակելի և համադրելի նշանակություն է ունեցել շատ հռչակագրերի ընդունման համար: Հիշյալ Հռչակագրը ևս հիմք հանդիսացավ ԱՄՆ-ի ստեղծման, իսկ հետագայում՝ 11 տարի անց, նաև ԱՄՆ-ի Սահմանադրության ընդունման համար:

Այսպես, ամերիկյան հեղափոխությունը աչքի ընկավ մի շարք առանձնահատկություններով, որոնցից մեկն էլ այն է, որ հետապնդում էր ազգային-ազատագրական նպատակներ: Այդ հեղափոխությունը սկսվել է սկզբնապես որպես խաղաղ, իսկ այնուհետև վերածվել բրիտանական գաղութային ընճնան դեմք գինված պայքարի<sup>6)</sup>: Եվ հենց այդպիսի պայմաններում հյուսիսամերիկյան 13 քրիտանական գաղութներ անկախություն հռչակեցին Մեծ Բրիտանիայից, և 1776թ. հուլիսի 4-ին Փենսիլվանիա նահանգի Ֆիլադելֆիա քաղաքում Երկրորդ Մայրականարային կոնգրեսի կողմից միաձայն ընդունվեց ԱՄՆ-ի անկախության հռչակագրը, որն սկիզբ որեց «Ամերիկյան Սիացյալ Նահանգներ» պետության ստեղծմանը և ամերիկյան ժողովրդավարության և սահմանադրականության ձևավորմանը: Իսկ մինչև այդ պատմական փաստաթղթի ծնունդը նախաձեռնվել են մի շարք գործընթացներ, որոնք հիմք են հանդիսացել դրա ընդունման համար: Հռչակագրի նախագծի կազմման համար Կոնգրեսը հիմնել է կոմիտե, որի կազմի մեջ էին մտնում տարրեր գաղութներից թումաս Ջեֆերսոնը (Վիրջինիա), Ջն Ադամսը (Մասսաչուսետս), Քենչամին Ֆրանկլինը (Փենսիլվանիա), Ո-նչեր Շերմանը (Կոննեկտিকուտ), Ո-որերտ Լի-վինգստոնը (Նյու-Յորք), այսինքն քավակա-



նին ներկայացուցչական կազմ նման քնույթի կարևոր փաստաթղթի ստեղծման համար։ Իսկ Հռչակագրի վերջնական տարրերակի հեղինակը դարձավ ամենաերիտասարդ կոնգրեսմեն, 33-ամյա Թոնմաս Զեֆերոսնը (հետագայում ԱՄՆ-ի 3-րդ նախագահը՝ ամերիկյան հեղափոխության հանրահայտ դեմոկրատական գործիչը, ֆրանսիական լուսավորիչների աշակերտն ու հետևորդը, ում առաջադիմ ժողովրդավարական գաղափարները դրվեցին Անկախության հռչակագրի հիմքում։

Սահմանադրական գարգացումների միջազգային փորձի համեմատական վերլուծությունը վկայում է, որ սահմանադրական անկախ պետությունների ծնունդը նախ հռչակվում է այն նպատակների, ցանկությունների, արժեքների համակարգային ամբողջականության մեջ, որոնք պետականության կայացման անկյունաքարը պետք է հանդիսանան, այնուհետև դրան հետևում է պետության քաղաքական կայացումը<sup>7</sup>։ Նախքան «ԼՂՀ հռչակման մասին» Հռչակագրի ընդունումը կատարվել են նախապատրաստական որոշակի աշխատանքներ, որոնք նպաստավոր հիմք են հանդիսացել Հռչակագրի ընդունման համար։ Խոսքը ստեղծված հանձնաժողովի մասին, որը հանձնն է առել մշակել և ժողովադատակորների քվեարկության դատին ներկայացնել իրավական այդպիսի փաստաթուրը։ Իրավահամեմատական ասպեկտից հիշյալ Հռչակագրը ու ԱՄՆ-ի անկախության հռչակագիրը որոշ չափով հար և նման են իրար, քանի որ երկուսի դեպքում էլ ստեղծված հասուն հանձնաժողովների առջև խընդիր էր դրված մշակել հռչակագրի նախագիծը։ Ընդ որում, հատկանշական այն է, որ երկու դեպքում էլ հանձնաժողովները կազմված են եղել ճանաչված իրավաբաններից։

Պատմությունից մեզ քաջ հայտնի է, որ դեռևս 488ր. Վաչագան Բարեպաշտ քաղավորի կողմից իրավիրվել է սահմանադիր ժողով և ընդունվել հայ իրականության մեջ առաջին Սահմանադրությունը։ Սա վկայում է այն մասին, որ Արցախի ժողովրդին յուրահատուկ է համազգային և համընդհանուր հարցերը լուծել քաղաքակիրք ճանապարհով՝ սահմանադիր ժողովների գումարման միջոցով, որը փոխանցվել է սերնդեսերունդ և ամենայն էլ պատահականության թերումով

չե, որ հազարամյակներ անց այդ նույն տարածքի մի մասի վրա ապրող արցախցին պետություն է հռչակում, որի հիմքը հանդիսացող Հռչակագիրը մշակում է հասուն հանձնաժողովը, և ընդունվում ժողովրդի ընտրյալների կողմից։ Եվ այս երկու պատմական իրադարձությունների միջև անպայմանորեն պետք է նկատել նմանությունն ու ինչ-որ տեղ նաև շարունակականությունը։ Եվ այս տրամաբանությամբ էլ 1991թ. սեպտեմբերի 2-ին իրավիրված համատեղ նատաշրջանն ընդունեց որոշում «Լեռնային Ղարաբաղի Հանրապետության հռչակման մասին հռչակագրի ընդունման և նրա պետական իշխանության ու կառավարման ժամանակավոր մարմինների ձևավորման մասին»<sup>8</sup>, որի 1-ին կետում նշված էր. «Ընդունել Լեռնային Ղարաբաղի Հանրապետության (ԼՂՀ) հռչակման մասին հռչակագիրը ներկայիս Լեռնային Ղարաբաղի ինքնավար Մարզի և սահմանակից Շահումյանի շրջանի սահմաններում։ Ի դեպ, նոր պետության ստեղծման այս ընթացակարգն ընդունված էր հետխորհրդային շատ երկրներում։ Հռչակագիրը խնդիր էր դնում ստեղծել զարգացած շատ երկրներին ներհատուկ ժողովրդավարական, իրավական հասարակարգ։ Ուշագրավն այն է, որ հարցի կարևորությունը հաշվի առնելով նատաշրջանը իրավիրվեց ոչ միայն մարզային, այև Շահումյանի շրջանային խորհրդի ժողովրդական պատգամավորների մասնակցությամբ, բայց միաժամանակ առանձնահատկությունը կայանում էր նրանում, որ իրավիրված էին նաև բոլոր մակարդակների ժողովրդական պատգամավորների խորհրդների ներկայացուցիչները, այսինքն ընդհուպ գյուղական խորհրդներից այն պատգամավորները, որոնք քաղաքական հասունությամբ պատրաստ էին իրենց ձայնը միացնելու այդ կարևոր որոշմանը։

ԼՂՀ-ն հռչակվեց ԼՂՄՄ-ի և Շահումյանի սահմաններում, ինչպես Ամերիկայի Միացյալ Նահանգները 13 նահանգների սահմաններում, իսկ այնուհետև Աղբեջանի կողմից սանձագերծած ազգային-ազատազրական պատերազմում արցախահայությունը ստիպված եղավ դիմել ինքնապաշտպանության, չդառնալ հերթական հայկական ցեղասպանության զոհ և ազատագրեց պապենական տարածքները՝ մասնակի վերականգնելով



## ՀՂՀ դատական իշխանություն

պատմական արդարությունը:

Հռչակագիրն իրենից իրավական արժեք է ներկայացնում նրա առանձին դրույթները համակարգային նիստության մեջ տեսնելու միջոցով, որոնք, փոխլրացնելով մեկը մյուսին, ստեղծում են կուռ համակարգ, որոնք թե՛ պատմական, թե՛ իրավական տեսանկյունից լիովին համապատասխանում են Արցախի տարածքում ապրող հայերի անցած ուղուն, ավանդույթներին և այլ արժեքներին:

Եթե ձևի առումով «ՀՂՀ հռչակման մասին» Հռչակագիրը որոշակի նմանություններ ունի այլ պետությունների նմանատիպ փաստարդների հետ, ապա բովանդակության առումով այն իր մեջ պարունակում է մի շարք առանձնահատկություններ: Մի կողմից այն արմատավորել է լիովին նոր արժեհամակարգ՝ հիմքում ունենալով պատմական նախադրյալներ, մյուս կողմից նրա առանձին դրույթներում կատարվում են շեշտադրումներ միջազգային իրավունքի և խորհրդային օրենսդրության հիման վրա նոր պետության հոչակման, նոր սկզբունքների և արժեքների որդեգրման, ինչպես նաև մի շարք միջազգային փաստարդներին հետևելու պատրաստակամության մասին:

Հռչակագրի մեջ ամրագրված որոշ դրույթներ ժամանակին ունեցան և հիմա էլ շարունակում են ունենալ անկյունաքարտային նշանակություն ժողովուրդների ինքնորոշման իրավունքի իրացմամբ անկախություն հռչակելու գործում: Սույն հոդվածի շրջանակներում կանդրադառնաք դրանցից մի քանի սին, քանի որ հենց դրանց միջոցով է հարավոր դարձել ձևավորել նոր հայկական պետություն:

«ՀՂՀ հռչակման մասին» Հռչակագիրն ունի մի շարք առանձնահատկություններ, որոնցից մեկն էլ այն է, որ նախքան դրա ընդունումը արցախահայության համահավաքամբն արտահայտվել է անցկացված հանրաքվեներում և դրա արդյունքում ընդունված իրավական ակտերում, որոնք իմք են հանդիսացել ժողագույնավորների կողմից Հռչակագրի ընդունման համար, այսինքն Հռչակագիրն ընդհանուր հաշվով ընդունել է ժողովուրդը՝ ձայնի վերջնական իրավունքը վերապահելով ժողագույնավորներին, ինչն էլ հիշյալ փաստարդը դարձնում է քարձրագույն իրավաբանական ուժում:

Մարմարանությամբ է շարադրված Հռչակագրի 1-ին կետը, ըստ որի՝ «արտահայտելով ժողովուրդի կամքը, որն ամրագրված է փաստացի անցկացված հանրաքվեում և ԼՂԻՄ ու Շահումյանի շրջանային իշխանության մարմինների 1988-1991թթ. որոշումներում, ազատության, անկախության, իրավահավասարության և քարիդրացիության նրա ձգուում»: 1988-1991թթ. անցկացված հանրաքվեների և շրջանային իշխանության մարմինների որոշումները, դժբախտաբար, չեն պահպանվել և դրանք գտնելու մեր համար ջանքերն անցել են ապարդյուն, սակայն դրանց մասին վկայում են այդ տարիների մի շարք քաղաքական գործիչներ, որոնց վկայությամբ՝ որպեսզի ընդունվելիք Հռչակագրին անմիջական ժողովրդահիշխանության սկզբունքով մասնակից դարձվի ժողովուրդը, դրանում արտահայտված լինի նրա կամքը, անցկացվել են հանրաքվեներ և կայացվել համապատասխան որոշումներ, որոնք շրջաններից ուղարկվել են մայրաքաղաքայի Ստեփանակերտ, և, հիմնվելով նաև այդ որոշումների վրա, համատեղ նստաշրջանն ընդունել է Հռչակագիրը:

Առանձնակի ուշադրության է արժանի Հռչակագրի 1-ին կետի 2-րդ մասում բվարկված այն իրավական արժեքները, որոնց ձևություն է Արցախի ժողովուրդը, իսկ դրանք ազատությունը, անկախությունը, իրավահավասարությունը, նաև քարիդրացիությունն են: Իրավական այս արժեքները համարվում են համընդհանուր և իրենց ամրագրումն են ստացել մի շարք միջազգային հանրաճանաչ փաստարդներում, մասնակիրապես ԱՄՆ-ի անկախության հոչակագրում (1776թ.), 1789թ. մարդու և քաղաքացու իրավունքների ֆրանսիական հռչակագրում, 1948թ. Մարդու իրավունքների համընդհանուր հռչակագրում (նախարան, կետ 1, հոդված 1, 2, 3, 7, 16), քաղաքացիական և քաղաքական իրավունքների մասին միջազգային դաշնագրում (նախարան, կետ 1, հոդված 3, 9, 14, 23, 26) և այլն: Այժմ անդրադարձ կկատարենք դրանցից մի քանիսին:

Արժեքներից առաջինի՝ ազատության մասին սկսել են մտորել դեռևս հին հույն փիլիսոփա Սոկրատի ժամանակներից սկսած: Այնուհետև բութուական հեղափոխություններն առաջ քաշեցին ազատության պահան-



ջը և լոգունգը: 19-20-րդ դդ. այն ստանում է լայն ճանաչում և ներկայումս դիտվում է որպես բարձր զարգացած հասարակության, լավ քաղաքական և իրավական համակարգի հատկանիշ<sup>9</sup>: Իրավական այս արժեքին ժամանակի ընթացքում տրվել են տարրեր բնորոշումներ, մասնավորապես՝ ազատությունը ներկայացվում էր որպես «հնարավորություն վարվելու այնպես, ինչպես ցանկանում են»<sup>10</sup> կամ ինչպես նշում է իրավունքի ռուս տեսարան Բ.Ն.Չիշերինը՝ «ազատությունը արտաքին գործողություններում ուրիշ կամքից անկախ լինելն է», իսկ Վ.Ա.Չետվերնինը գրում է, որ «ազատությունը մարդկային հասարակության բացարձակ արժեք է»<sup>11</sup>: Ազատությունը տարրեր դրսնորումներով իր հետագա անրագրումն է ստացել ինչպես «ԼՂՀ պետական անկախության մասին» Հոչակագրում, այնպես էլ «ԼՂՀ պետական անկախության հիմունքների մասին» ԼՂՀ սահմանադրական օրենքի տարրեր կետերում, իսկ տարիներ անց նաև ԼՂՀ Սահմանադրության 2-րդ հոդվածում, ըստ որի՝ «Լեռնային Ղարաբաղի Հանրապետությունը ճանաչում է մարդու հիմնական իրավունքներն ու ազատությունները՝ որպես անօտարելի ու բարձրագույն արժեքներ, ազատության, արդարության և խաղաղության հիմք», ինչպես նաև Սահմանադրության 5-րդ, 9-րդ, 20-րդ, 22-րդ, 26-րդ, 27-րդ, 34-րդ, 42-րդ, 43-րդ, 44-րդ և այլ հոդվածներում:

Հոչակագրի մեջ թվարկված արժեքներից հաջորդը՝ անկախությունը, շատ դեպքերում իր որույն տեղն է գտնում հոչակագրի հենց վերնագրում: Որպես օրինակ կարող է հանդիսանալ Լեռնային Ղարաբաղի Հանրապետության, Հայաստանի Հանրապետության, ԱՄՆ-ի, Ռուսաստանի և այլ երկրների անկախության (նաև՝ պետական անկախության) հոչակագրերը: Պրոֆեսոր Գագիկ Հարությունյանը անկախությունը բնորոշում է որպես «ինքնուրույն, սեփական հայեցողությամբ գործելու կարողություն և երաշխավորված հնարավորություն»<sup>12</sup>: «ԼՂՀ պետական անկախության մասին» Հոչակագրի և դրա հիման վրա ընդունված Սահմանադրական օրենքի 1-ին կետերում նշված է, որ «ԼՂՀ-ն անկախ պետություն է»: Անկախությունն ունի տարրեր ընկալումներ, մասնավորապես՝ պետության ինքնիշխանություն, իշխանության

տարածատում, դատավորների կարգավիճակը անհատների համար և այլն: Սակայն, ի թիվս իշխալ դրսնորումների, Հոչակագրի մեջ առաջին հերթին նկատի է առնվում անկախությունն ինքնիշխանության տեսքով, այսինքն դա ոչ միայն պետական իշխանության գերակայությունն ու անկախությունն է իր տարածքի ներսում և այլ պետությունների հետ հարաբերություններում, այս նրա ներքին գործերին չխառնվելու պետությունների պարտականությունը, որը հանդիսանում է նաև միջազգային իրավունքի սկզբունք: Այս ահազանգն առաջին հերթին ուղղված է Աղբքաբեցին, քանի նա թե՛ մինչև ԼՂՀ հոչակումը, թե՛ դրանից հետո տարածքային պահանջներ էր ներկայացնում ԼՂՀ իշխանություններին, ընդիուպ մինչև ԼՂՀ հոչակումը համարելով անօրինական:

Հավասարությունը ազատության հետ միախին դիտարկվում է որպես մարդու իրավունքների կարևորագույն քաղադրիչ, ժողովրդավարական, իրավական և սոցիալական պետության հատկանիշ: Հավասարության պահանջը լայն հասարակական արձագանք է ստանում բուրժուական հեղափոխությունների դարաշրջանում: Այն հիմք է հանդիսացել սոցիալական և քաղաքական կարգը, իրավական համակարգը վերափոխված բարեփոխումների լայն շրջանակի համար: Ընտրական իրավունքի ընդլայնումը, սեռերի իրավահավասարության հաստատումը, կրոնական, եքնիկական և այլ փոքրամասնությունների օրինական շահերը իրականացվել են հավասարության դրոշի ներքո<sup>13</sup>: Իրավական այս արժեքը ամրագրվել է ինչպես «ԼՂՀ պետական անկախության մասին» Հոչակագրում, այնպես էլ իր տարատեսակներով ձևակերպվել է «ԼՂՀ պետական անկախության ինքնունքների մասին» Սահմանադրական օրենքի 4-րդ, 7-րդ, 9-րդ, 11-րդ կետերում, նաև ԼՂՀ Սահմանադրության մեջ, ի մասնավորի՝ 21-րդ, 38-րդ, 45-րդ և այլ հոդվածներում: Սակայն ներկայացված տեսական նյութն ավելի շոշափելի է դառնում, եթե ծանրանում ենք ԼՂՀ դատարանների կողմից կայացված դատական ակտերի հետ, որոնցում, ի թիվս իրավունքի այլ սկզբունքների, ուղենիշային դեր է կատարում նաև հավասարության սկզբունքը, որն էլ արտահայտվում է դատարանի ողբերողման մեջ:



## ՀԱՀ դատական իշխանություն

Հռչակագրի 2-րդ կետում նշվում է. «արձանագրելով Աղրբեջանի Հանրապետության կողմից «1918-1920թթ. պետական անկախության վերականգնման» հոչակումը»: Ամենահին էլ պատահական չէ, որ պետության համար հույժ կարևորություն ներկայացնող այս Հռչակագրում է տեղ գտել նմանաբնույթ փաստի արձանագրումը:

ԽՍՀՄ կազմից դուրս գալու գործընթացն Աղրբեջանն իրագործեց Աղրբեջանական ԽՍՀ-ի Գերազույն Խորհրդի կողմից 1991թ. օգոստոսի 30-ին «Աղրբեջանական Հանրապետության պետական անկախության վերականգնման մասին» հոչակագրի և 1991թ. հոկտեմբերի 18-ին «Աղրբեջանական հանրապետության պետական անկախության մասին» սահմանադրական ակտի ընդունման միջոցով: Նշված սահմանադրական նորմերը հրոշակեցին Աղրբեջանին 1918-1920թթ. գոյություն ունեցող Աղրբեջանական Ժողովրդավարական Հանրապետության պետական կազմի և, հետևաբար, 1918-1920թթ. սահմանների «Վերադարձումը», երբ Լեռնային Ղարաբաղը (ինչպես և Նախիջևանը) չին մտնում Աղրբեջանի կազմի մեջ<sup>14</sup>: Եվ ինչպես արդարացիորեն նկատում է Անդրեյ Արեշևը, «տվյալ փաստարդերն ընդունվել են առանց հանրաքվեի անցկացման, այսինքն՝ առանց հաշվի առնելու ինչպես հանրապետության բնակչության, այնպես էլ ինքնավար կազմավորումների և համահավաք ապրող ազգային խմբերի կարծիքները, ինչը համարվում է ընդունված համաշխարհային պրակտիկա»<sup>15</sup>: Դրանից բացի, կասկածի տակ է նաև Աղրիւշ-ի Գերազույն խորհրդի կողմից ընդունված հոչակագրի և սահմանադրական ակտի օրինականությունը, քանի որ ներկայիս Աղրիւշ-ի իրավահաջորդությունից, հետևաբար դրա գոյության ընթացքում պետական մարմնի ընդունած փաստարությը չի կարող իրավական ուժ ունենալ, քայլ դա, ինչպես ասում են, հարցի մյուս կողմն է:

Ուշադրության է արժանի իրավական այն նրբերանգը, ըստ որի՝ Աղրբեջանը ընդունել է ոչ քե անկախության հոչակագիր, այլ պետական անկախության վերականգնման հոչակագիր: Տրամաբանության տիրույթից դուրս է նման քայլի գնալը, քանի որ դա կարելի է դիտել որպես անոնալիա, շեղում միշագային

իրավունքից, պրակտիկայից, եզակի դեպք այն իմաստով, որ վերականգնվում է ոչ քե նախորդ պետականությունը, այլ դրանից մոտ 70 տարի առաջ և ընդամենը երկու տարի գոյատևած պետականությունը: Այդ հոչակագրի երկրորդ կետում նշվում է, որ «1918-1920թթ. Աղրբեջանի Հանրապետությունը գոյություն է ունեցել որպես անկախ, միջազգային հանրության կողմից ճանաչված պետություն»: Այստեղ հոչակագրի մակարդակով կատարվել է երկու կեղծիք. նախ, 1918-1920թթ. գոյություն ունեցած պետականությունը ոչ քե կոչվել է Աղրբեջանի Հանրապետություն, այլ Աղրբեջանի Դեմոկրատական Հանրապետություն, որոնք լիովին տարբեր են: Ի դեպ, 1991թ. հոկտեմբերի 18-ին «Աղրբեջանական հանրապետության պետական անկախության մասին» սահմանադրական ակտի 2-րդ հոդվածում նույնպես տրված է այսօրինակ խեղաքյուրված ձևակերպում, ըստ որի՝ «Աղրբեջանի Հանրապետությունը հանդիսանում է 1918թ. մայիսի 28-ից 1920թ. ապրիլի 28-ը գոյություն ունեցած Աղրբեջանի Հանրապետության իրավահաջորդը»: Երկրորդ, հազիկ երկու տարի գոյատևած պետության սահմանները չի ճանաչվել Ազգերի Լիգայի կողմից: Ինչպես իրավացիորեն նկատում է այրովեսոր Ա.Մանայանը, «1991թ. ԱԴՀ պետականության վերականգնման մասին ակտերում Բարուն պարտավոր էր Աղրբեջանի Հանրապետության սահմաններ չի ունեցել: Բարուն դա չի արել և ՍԱԿ է ընդունվել առանց հոչակված սահմանների»<sup>16</sup>: Ընդ որում, Աղրբեջանը խնդիրներ ունի նաև 1918-1920թթ. ԱԴՀ-ի սահմանների հետ կապված, քանի որ նա ճանաչված և փաստորեն հաստատված սահմաններ չի ունեցել և ըստ այդմ էլ Ազգերի Լիգան դե յուրե չի ճանաչել նրա սահմանները: Հաջորդ հիմնահարցը, որը հանդիսանում է հայկական կողմի հաղթարդերից մեկը և, հետևաբար, աղրբեջանական կողմի բացը, իրավահաջորդությունն է: Այստեղ առկա է իրավահաջորդության խափանում, դրա իրավական կապի խզում, ըստ որի՝ Խորհրդային Աղրբեջանը չի հանդիսանում 1918-1920թթ. գոյություն ունեցած Աղրբեջանական Դեմոկրատական Հանրապետության իրավահաջորդը, իսկ Աղրբեջանի Հանրապետությունն էլ իր հերթին հրաժարվել



է Խորհրդային Աղքեցանի իրավահաջորդը լինելուց: Ստացվում է այնպես, որ մոտ մեկ հարյուրամյակի ընթացքում գոյություն է ունեցել տարբեր կարգերի Աղքեցան, բայց դրանցից և ոչ մեկը նախորդի իրավահաջորդը չէ, իսկ ավելի կոնկրետ՝ յուրաքանչյուրը իրաժարվել է նախորդից: Սա ոչ միայն միջազգային իրավունքում եզակի դեպք է, այլև անհմաստություն, տրամաբանությունից գուրկ երևույթ, իրավական գավեշությունը և անկախացած մյուս երկրներից ոչ մեկը նման քայլի չի գնացել, իսկ Աղքեցանի Հանրապետության նման վարվելակարգն իր մեջ մութ էջեր է պարունակում: Անկախ ամեն հանգամանքից, որոնք կվերաբերեն Խորհրդային Աղքեցանի իրավահաջորդը լինելու Աղքեցանի Հանրապետության անտարբեր վերաբերմունքին, այնուամենայնիվ, մերօրյա Աղքեցանը փորձել է խոսափել Լեռնային Դարարադի ժողովրդի հանդեպ իրականացրած այն հակաօրինական գործողությունների համար միջազգային իրավունքով և ներպետական օրենսդրությամբ նախատեսված պատասխանատվությունից, որն Աղքեցանը պետք է կրեր իրավահաջորդությունը ստանձնելուց հետո, այսինքն սա նույն է, ինչ մարդ իրաժարվի իր անցյալից:

Այստեղ հարկ ենք համարում մեջքերել մի օրինակ, որը կվկայի ԱղքեցԱՀ Գև անհետատեսության նասին այն իմաստով, որ 1991թ. օգոստոսի 30-ի հոչակագրում տրված ձևակերպումն անհաջող է և առաջացնում է իրավական պատասխանատվության հետևանքներ: 1920թ. մարտի 22-ի լույս 23-ի գիշերը թուրք-աղքեցանական գործերն ու քրդական խմբավորումները Խոսրով-քեկ Սուլթանովի գլխավորությամբ հարձակվեցին Շուշիի վրա և մարտի 23-ի երեկոյան համարյա ամբողջությամբ իրի մատնեցին ու քալանեցին քաղաքի հայկական քաղաքասը: Մարտի 23-ին և հաջորդ երկու օրերին քաղաքի բնակչության 2/3-ը կազմող շուրջ 30 հազար հայերից սպանվեց կամ անհայտ կորավ 20 հազար մարդ: Մի շարք փաստաթղթեր վկայում են, որ հայկական բնակչության կոտրածը լավ նախապատրաստված և կազմակերպված էր Աղքեցանի իշխանության կողմից: Վիճակագրական տվյալներից տեղեկանում ենք, որ 1912թ. Շուշին ուներ 42400 բնակիչ, որից 61,2 տոկոսը հայեր էին, 1916թ.՝ 43869 բնակիչ,

որից 21926-ը հայեր էին, 18641-ը՝ մուտքամաներ, 1249-ը՝ ոռուներ, իսկ 1920թ. Շուշիի ցեղասպանությունից մեկ տարի անց՝ 1921թ. քաղաքում մնացել էր ընդամենը 300-ից ոչ ավելի հայ:

Աղքեցանի Հանրապետության իրաժարումը Խորհրդային Աղքեցանի իրավահաջորդը լինելուց բացատրվում է նաև նրանով, որ դրանով ցանկացել են խուսափել 1988թ. Սումգայիթի և այլ քաղաքներում իրականացրած ոճագործությունների համար պատասխանատվությունից, մինչդեռ մոռանալով, որ թե՛ ԱԴՀ-ն, թե՛ ԱղքեցԱՀ-ն իրենց գոյության ընթացքում այնքան հակաօրինական գործողություններ են կատարել հայերի նկատմամբ, որ «խուս տալով մի քակարդից ընկնում են մյուսը»: Այսինքն, եթե ներկայիս ԱՀ-ն իրեն ճանաչել է 1918-1920թթ. գոյություն ունեցած ԱԴՀ-ի իրավահաջորդը, իսկ վերջինիս գոյության ընթացքում է կատարվել Շուշիի հայկական բնակչության դեմ ցեղասպանությունը, ապա այսօրվա ԱՀ-ն պետք է պատասխանատվություն կրի 1920թ. մարտի 23-ին Շուշիում ծրագրված ու իրականացված հայկական հերթական<sup>17</sup> ցեղասպանության համար<sup>18</sup>:

Տեղին ենք համարում քարձրացնել այսպիսի, գուցեն հոեսորդական հարց. եթե Քաջուն իրաժարվել է Խորհրդային Աղքեցանի ժառանգությունից, լինելու նրա իրավահաջորդը, ապա ինչո՞ւ է ցանկանում վերականգնել իրքն թե Խորհրդային Աղքեցանի՝ առանց այն էլ ապօրինի ձևավորված սահմանները:

Հոչակագրի 4-րդ կետում ձևակերպվել է այն դրույքը, որով հորում է կատարվում 1990թ. ապրիլի 3-ին ընդունված «ԽԱՀ կազմից միութենական հանրապետության դուրս գալու հետ կապված հարցերի լուծման կարգի մասին» ԽԱՀ օրենքի 3-րդ հոդվածի վրա: Հոչակագրի այդ կետում մասնավորապես ասվում է. «հիմնելով ԽԱՀ Սլության գործող Սահմանադրության և օրենքների վրա, որոնք ինքնավար կազմավորումներին և համահավաք ապրող ազգային խմբերին իրավունք են տալիս ԽԱՀ-ից միութենական հանրապետության դուրս գալու դեպքում ինքնուրույն որոշելու իրենց պետականական կարգավիճակի հարցը»: Այս դրույքը կարելի է համարել Հոչակագրի «կորիզն» այն իմաստով, որ հենց սա է իրավական հիմք հանդիսացել իրացնե-



## ԼՂՀ դատական իշխանություն

լու ինքնորշման իրավունքը և ստեղծել նոր պետություն՝ այս համատեքստում հիմնվելով նաև ԽՍՀՄ Սահմանադրության և միջազգային իրավունքի նորմերի վրա:

Իսկ Հռչակագրի 8-րդ կետում հայտնվում է հավատարմություն միջազգային բնույթի վիաստարդերի նկատմամբ և պատրաստականություն հետևելու դրանց դրույթներին, ի մասնավորի՝ «հարգելով և հետևելով Մարդու իրավունքների համընդիանութ Հռչակագրի և Տնտեսական, սոցիալական և մշակութային իրավունքների մասին միջազգային դաշնագրի, Քաղաքացիական, քաղաքական և մշակութային իրավունքների մասին միջազգային դաշնագրի սկզբունքներին և ակնկալելով միջազգային հանրության ընդունումն ու աջակցությունը»:

Նորանկախ ԼՂՀ-ի ազգային իրավական փաստարդերի մեջ «ԼՂՀ հռչակման մասին» Հռչակագիրը եղավ առաջինը, որը հղում կատարեց 1948թ. Մարդու իրավունքների համընդիանութ Հռչակագրի և 1966թ. ընդունված երկու Դաշնագրերի վրա: Այդ կապակցությամբ 1992թ. նոյեմբերի 26-ին Լեռնային Ղարաբաղի Գերագույն Խորհրդությունը որոշում է ընդունել միանալու «Գաղութային երկրներին և ժողովուրդներին անկախություն շնորհելու մասին», «Մարդու իրավունքների համընդիանութ» հռչակագրերին, ինչպես նաև «Քաղաքացիական և քաղաքական իրավունքների մասին» միջազգային դաշնագրին ու կից ֆակուլտատիվ արձանագրությանը: Այդ որոշման տեքստը ուղարկվել է ՍԱԿ-ի Գլխավորքարտության և ՍԱԿ-ի անդամ բոլոր պետություններին:

Հետաքրքրականն այն է, որ աղբբեջանական մի շարք աղբյուրներում<sup>19</sup> կասկածի տակ է դրվում 1990թ. ապրիլի 3-ի օրենքի կիրառության օրինականությունը ԼՂՀ-ի պարագայում: Սակայն ոչ մի խոսք անգամ չկա այն մասին, թե արդյո՞ք ԼՂՀ-ն խախտել է այն միջազգային իրավական ակտերի դրույթները, որոնք ընդունվել են Վերոհիշյալ օրենքից շատ ավելի վաղ և սահմանում են, որ «բոլոր ժողովուրդներն ունեն ինքնորշման իրավունք: Այդ իրավունքի ուժով նրանք ազատորեն սահմանում են իրենց քաղաքական կարգավիճակը և ազատորեն ապահովում իրենց տնտեսական, սոցիալական ու մշակութային զարգացումը»<sup>20</sup>:

Հռչակագրի եզրափակիչ մասում իր ամրագումն է գտել մի ուշագրավ միտք, ըստ որի՝ «մինչև Լեռնային Ղարաբաղի Հանրապետության Սահմանադրության և օրենքների ընդունումը ԼՂՀ-ի տարածքում գործում են ԽՍՀՄ-ի Սահմանադրությունը և օրենսդրությունը, ինչպես նաև ներկայումս գործող այլ օրենքներ, որոնք չեն հակասում սույն Հռչակագրի նպատակներին ու սկզբունքներին և Հանրապետության առանձնահատկություններին»: Այդ սկզբունքները նախ և առաջ ազատությունը, անկախությունը, հավասարությունն է, ինչպես նաև այն միջազգային իրավական փաստարդերի մեջ բովանդակվող սկզբունքները, որոնք թվարկված են Հրաշակագրությամբ: Ի կատարումն Հռչակագրի եզրափակիչ մասի այս դրույթի, Լեռնային Ղարաբաղի Հանրապետության ժողովրդական պատգամավորների խորհրդի գործկումը 1991թ. նոյեմբերի 28-ին տեղի ունեցած 17-րդ նիստի ժամանակընդունելու թիվ 4/146 որոշումը «Լեռնային Ղարաբաղի Հանրապետության Հիմնական օրենքի՝ ԼՂՀ Սահմանադրության մշակման Հանձնաժողովի կազմավորման մասին»<sup>21</sup>, որի 1-ին կետով ստեղծվել էր 15 հոգուց բաղկացած հանձնաժողով, իսկ 2-րդ կետով Հանձնաժողովին հանձնարարվել էր 1-ամսյա ժամկետում ժողովրդական պատգամավորների խորհրդի գործկումի ըննարկմանը ներկայացնել ԼՂՀ Հիմնական օրենքի նախագիծը: Հատկանշականն այն է, որ դեռևս 1991թ. խոսվում էր ԼՂՀ Սահմանադրություն ունենալու անհրաժեշտության մասին, ինչին, սակայն, օրյեկտիվ և սույնեկտիվ պատճառներով պայմանավորված, ընթացք չտրվեց և վերջապես ընդունվեց 2006թ. դեկտեմբերի 10-ին անցկացված համաժողովրդական հանրարվելի միջոցով:

Եվ հիմնվելով վերոհիշյալ կետերի վրա, բոլոր մակարդակների խորհրդների պատգամավորների մասնակցությամբ՝ ժողովրդական պատգամավորների Լեռնային Ղարաբաղի մարզային և Շահումյանի շրջանային խորհրդների համատեղ նստաշրջանը «հռչակեց Լեռնային Ղարաբաղի Հանրապետությունը՝ ներկայիս ԼՂՀ-ի և հարակից Շահումյանի շրջանի սահմաններում»:

Այսպիսով, հիմնվելով արխիվային և այլ նյութերի վրա, առաջնորդվելով միջազգային, խորհրդային և ներպետական իրավական



ակտերով ու պատմահրավահամեմատական մերողով, կարելի է կատարել հետևյալ ընդհանրացումները՝

1. Վերոհիշյալ Հռչակագրի ընդունումով աշխարհում նոցվեց պետության ստեղծման նոր մոդել։ Այդ իսկ նկատառումով «Լեռնային Ղարաբաղի Հանրապետություն» պետության ստեղծման փիլիսոփայությունը կարելի է ձևակերպել հետևյալ կերպ. սկզբից հռչակվել է պետություն՝ ընդունելով որոշում «Լեռնային Ղարաբաղի Հանրապետության հռչակման մասին հռչակագրի ընդունման և նրա պետական իշխանության ու կառավարման ժամանակավոր մարմինների ձևավորման մասին», այնուհետև ժողագույնավորների կայացրած որոշումը հաստատվել է համաժողովրդական հանրաքվեով՝ ժողովրդի կողմից, որից հետո ընտրությունների միջոցով ձևավորվել է օրենսդիր մարմին՝ Գերազույն Խորհուրդ, որն էլ ընդունել է Հռչակագրի «ԼՂՀ պետական անկախության մասին»։ Դրան հաջորդել են պետական մարմինների ձևավորումն ու կայացումը։

2. Հռչակագիրը դրեց անկախ ԼՂՀ-ի պետականության հիմքերը և իրավական ու ժողովրդավարական երկրի կառուցման նախադրյալները։ Թե՛ 20 տարի առաջ, թե՛ այսօր Հռչակագրի պատմական նշանակությունն անգնահատելի է։ Կարելի է ասել, որ այդ Հռչակագիրը միայն ժողագույնավորները չեն ընդունել, այլ ամբողջ ժողովուրդը, որը կանգնած էր նրա թիվունքում։

3. Անկախությունը միշտ անպայմանորեն իր գիճն է ունենում, իսկ մենք դրա համար շատ քանի վճարեցինք՝ հազարավոր մարդկանց կյանքի գնով։ Հռչակագիրն իր մեջ կրում է բարձրագույն գաղափարներ, որոնք 20 տարվա հեռավորությունից կարելի է ասել, որ զգալի մասը կենսագործվել են։

4. Նախքան Հռչակագրի ընդունումը արցախահայությունն ապրում էր մի հասարակարգում, իսկ հիմա լիովին այլ, որը բխում է թե՛ ժողովրդի հավաքական կամքից, թե՛ միջազգային իրավունքի պահանջներից և թե՛ 1991 թվականից ի վեր ընդունված իրավական փաստարդերից։

5. ԼՂՀ «Հռչակման մասին» Հռչակագրի անանց արժեքը գործնականում շոշափելի է դառնում 20-ամյա բարձրությունից, եթե համոզվում ենք, որ Հռչակագրի հեղինակներն

այն ժամանակ կարողացել են դրա մեջ խտացնել այն կարևոր ասելիքը, այն գաղափարներն ու սկզբունքները, որոնք իրենց արդիականությամբ որոշ նկատառումներով զարմացնում են 21-րդ դարում ապրող մարդուն, նաև այն մարդուն, ով ապրում է Արցախում՝ այն երկրում, որը բոլոր ասպեկտներից կայացած պետություն է դարձել և թևակոխել զարգացման նոր փուլ։

6. ԼՂՀ-ի գոյության ընթացքում ընդունվել են երկու՝ 1991թ. սեպտեմբերի 2-ի «ԼՂՀ հրոշակման մասին» և 1992թ. հունվարի 6-ի «ԼՂՀ պետական անկախության մասին» Հռչակագրեր, որոնցից առաջինը հիմք է հանդիսացել երկրորդի ընդունման համար, իսկ վերջինն հանդիսանում է առաջինի տրամաբանական շարունակությունը։ «ԼՂՀ հռչակման մասին» Հռչակագրով չամրագրվեցին մարդու իրավունքների և ազատությունների, պետական կառուցվածքի վերաբերյալ դրույթներ, այլ հղում կատարվեց մարդու իրավունքների վերաբերյալ մի շարք միջազգային փաստարդերի, որը, սակայն, ժամանակի խնդիր էր և իրազործվեց 1992թ. հունվարի 6-ի «ԼՂՀ պետական անկախության մասին» Հռչակագրով և դրա հիման վրա նույն թվականի հունվարի 8-ին Գերազույն Խորհրդի կողմից ընդունված «Լեռնային Ղարաբաղի Հանրապետության պետական անկախության հիմունքների մասին» ԼՂՀ սահմանադրական օրենքով։

7. «ԼՂՀ հռչակման մասին» Հռչակագիրը հիմք է հանդիսացել, որպեսզի 1991թ. դեկտեմբերի 10-ին անցկացվի անկախության հանրաքենաց ժամանականում առաջարկվեն, որից հետո ձևավորվել են պետական ինստիտուտները։ Այդ 2 պատմական իրադարձությունները և դրան հավելած խորհրդարանական ընտրությունների արդյունքում ձևավորված օրենսդիր մարմինը՝ Գերազույն Խորհրդը, 1992թ. հունվարի 6-ին ընդունեց «ԼՂՀ պետական անկախության մասին» Հռչակագիր, որի մեջ կարելի է գտնել կառուցվելիք այն հասարակարգի մողենը, որը ծրագրել էին ԼՂՀ ԳԽ պատգամավորները։ Ծիծու է, մերօրյա ԼՂՀ-ն որոշ առումներով տարրերվում է այդ մողելից, բայց միայն դրական առումներով, սակայն սկզբունքային և հիմնարար տեսանկյունից այն ուղեգիծը, որը գծվեց 1991թ. սեպտեմբերի 2-ից 1992թ. հունվարի 6-ն ընկած ժամանակահատվածում,



## ԼՂՀ դատական իշխանություն

այսօր շարունակվում է և դրան զուգահեռ շարունակական բնույթ է կրում զարգացման ճանապարհը: Այդ ամենը հիմք է համալիսացել այնպիսի հիմնարար իրավական ակտերի ստեղծմանը, որոնք անկյունաքարային նշանակություն են ունեցել ԼՂՀ ազգային օրենսդրության ձևավորման համար: Դրանցից կարելի է նշել «Պետական սեփականության մասին», «Արտակարգ դրության մասին», «Լեռնային Ղարաբաղի Հանրապետության պետական անկախության հիմունքների մասին», «ԼՂՀ Գերազույն խորհրդի մասին», «ԼՂՀ նախարարների խորհրդի մասին», «Ռազմական հանցագործության համար քրեական պատասխանատվության մասին», «Զինապարտության մասին», «ԼՂՀ պաշտպանության մասին», «Դատախազության մասին», «ԼՂՀ նախագահի մասին», «ԼՂՀ խորհրդարանի մասին», «ԼՂՀ կառավարության մասին», «Սեփականության մասին», «Օտարերկրյա ներդրումների մասին», «Քաղաքացիության հիմնական սկզբունքների մասին» ԼՂՀ օրենքները և այլն:

8. Հոչակագրի բարձրագույն արժեքն ու կարևորագույն դերակատարությունը ժամանակի ընթացքում կայանում է նրանում, որ այդ փաստարդում ամրագրված դրույթները, չնայած իրենց հոչակագրային, այսինքն ոչ պարտադիր բնույթին, գիտակցված ձևով թե՛ ԼՂՀ իշխանությունների, թե՛ առանձին վերջիած ժողովրդի կողմից միս ու արյուն են դարձել՝ կազմելով մարդկանց ապրելակերպի մի մասը, որի անխոս վկան այսօրվա ժողովրդավարական սզբունքներով առաջնորդվող և ապրող ԼՂՀ քաղաքացիական հասարակությունն է, որը չնայած դեռևս վերջնականապես կայացած չէ, սակայն այդ ճանապարհի վերջնակետին հասնելու համար ունի բոլոր նախադրյալները:

9. Հոչակագրի դրույթների կենսագործումը նշանակում է, որ իրականություն է դարձել ժողագումամակրների կայացրած որոշումը, այսինքն խոսքը գործ է դարձել՝ վերածվելով ապրող իրողության, իսկ ԼՂՀ Սահմանադրության նորմերի լիարժեք իրացման պարագայում կխոսվի սահմանադրականության մասին, որի առաջին հիմքերից մեկն էլ «ԼՂՀ հոչակման մասին» Հոչակագրի դրույթների կյանքի կոչումն է:

10. Աշխարհի համարյա բոլոր երկրներում

անկախության օրը համարվում է համազգային, համապետական տոն և ելեկով այս տրամաբանությունից կարևոր է այն համագամանքը, որպեսզի անկախության հոչակման օրը նշվի որպես տոն, քանի որ մարդիկ կամաքե ակամա փորձում են յուրովի արժեվորել այն թե՛ իրենց և թե՛ պետության կյանքում ունեցած դերակատարությունը: Եվ պատահական չէ, որ «ԼՂՀ տոների և հիշատակի օրերի մասին» ԼՂՀ օրենքի 12 հոդվածի համաձայն՝ սեպտեմբերի 2-ը նշվում է որպես Լեռնային Ղարաբաղի Հանրապետության օր և հայտարարված է ոչ աշխատանքային:

11. Ղարաբաղյան հակամարտության կարգավորման նպատակով ստեղծված Մինսկի խոսքն իր կազմի մեջ ընդգրկում է համանախազահ նաև Ամերիկայի Միացյալ Նահանգներից, որին պետք է հիշեցնել այն մասին, որ ներկայիս Միացյալ Նահանգները կազմավորվել է անզինական գաղութատերերի հողերում, այսինքն՝ ոչ իրենց: Չպետք է մոռանալ նաև, որ արցախահայությունը ինքնորշման իր իրավունքն իրացրել և ստեղծել է պետություն այն տարածքում, որի՝ արցախցիներին պատկանելությունը վկայում են ինչպես օտար պատմիները, այնպես էլ Արցախի հողում պեղումների արդյունքում հայտնաբերված մի շարք գտածոներ: Եթե ամերիկացիներն օտարի հողում ինքնորշվել և պետություն են ստեղծել, ապա այդ իրավունքը թե՛ իրավական, թե՛ բարոյական տեսանկյունից ունեն նաև արցախցիները:

12. Եվ դրանով հանդերձ կարելի է վստահորեն ասել, որ ԼՂՀ անկախացման և ժողովրդակատարության զարգացման իրական փաստը վերջին 20 տարվա ամենավեհ ձեռքբերումն է:

1. «ԼՂՀ հոչակման մասին» Հոչակագրի բնօրինակը տե՛ս ԼՂՀ Պետական արիստ, ֆ.1, ց.2, կ.28, պ.մ.309, թ.63-64:

2. [http://dic.academic.ru/dic.nsf/dic\\_fwords/9408/](http://dic.academic.ru/dic.nsf/dic_fwords/9408/) & /

3. Արյունյան Գ.Ր., Բագլայ Մ.Վ. Կոնституционное право: Энциклопедический словарь.- М.: Норма, 2006.-с. 129.

4. [http://dic.academic.ru/dic.nsf/enc\\_law/514/](http://dic.academic.ru/dic.nsf/enc_law/514/) & /

5. Վլադիմիր Նազարյան. Հայասպանի անկախության հոչակագրի բառանալյալը // ՀՀ սահմանադրական դարարանի գլուխագիր, 3 (16) 2000, էջ 3:

6. История государства и права зарубежных стран. Часть 2. Учебник для вузов - 2-е изд., стер. / Под общ. ред. проф. Крашенинниковой Н.А и проф. Жидкова О. А. - М.- Издательство НОРМА, 2001. [Էլեկտրոնային գրքերակ]. - Սուվորի ռեժիմ - <http://www.alleng.ru>

7. Գ. Գ. Հարուրյոնյան. Հայաստանի անկախության մասին հոչակագրի պետականագիրական դերն ու նշանակությունը նորանկախ Հայաստանի իրավական համակարգի ձևավորման գործում. [Էլեկտրոնային գրքերակ]. - Սուվորի ռեժիմ - <http://concourt.am>

8. Տե՛ս ԼՂ ՊԱ. ֆ.1, ց.2, կ.28, պ.մ.309, թ.60-62:

9. Мартышин О.В. Проблема ценностей в теории государства и права//Государство и Право. 2004. № 10.-С.9.

10. Философский словарь (Основан Г.Шмидтом). М., 2003. С. 397.

11. Четвернин В.А. Понятие права и государства. Введение в курс теории права и государства. М., 1997. С. 33.

12. Арутюнян Г.Г., Баглай М.В. Конституционное право: Энциклопедический словарь.- М.: Норма, 2006.-с. 282.

13. Мартышин О.В. Проблема ценностей в теории государства и права//Государство и Право. 2004. № 10.-С.10.

14. ԼԵՇՈՆԱՅԻՆ ՊԱՐԱՎԱԴԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ. Պետականության կայացումը դարերի սահմանագծում. Քաղաքական հետազոտությունների ինստիտուտ, 2009, էջ 15:

15. Андрей Ареев. К 20-летию провозглашения Нагорно-Карабахской Республики // Нагорно-Карабахской Республике 20 лет/Составитель и редактор проф. В.А.Захаров.-М., Центриздат, 2011.-С.20

16. Մանաւյան Ա. Ղարաբաղյան հիմնախրանքիր: Փաստաթիւն և փաստադրեր: Եր: Գասպարիա, 2005, էջ 20:

17. Պայմանականորեն հերքական ենք համարում այն իմաստով, որ դրանց հենքու գարիները շարունակ դարձեր քաղաքացիություն (1988թ. վելպարագարի 27-29-ը Սումգայիրում, Կիրովարդում, 1990թ. հունիսի 13-20-ը Բարձում, 1991թ. ապրիլի 30-ից սկսած երեք ամիս շարունակ Գեղաշենում, Մարտավայում. Այս մասին տե՛ս Հայոց ցեղասպանություն, խմբ. Պ.Հ.Հովհաննիսյանի, Երևան, 2001, 186-210 էջեր) հայերի մկանամբ նոյնական իրագործվել է ոճագործություն, որը միջազգային իրավունքի լեզվով անվանում են ցեղասպանություն, չնայած քաղաքական և իրավական շրջանակներում դրանց մասին լրում են, այլ խոսուն են միայն պարմական աղբյուրները:

18. Այս մասին ավելի մանրամասն տե՛ս Ա. Հարուրյոնյան. 1920թ. մարդկան ցեղասպանությունը

Ծովիում // «Ազար Արցախ», 34 (2604), էջ 3:

19. Մասնավորապես տե՛ս Արմանո-ազերբայջանական կոնֆլիկտ: история, право, посредничество / И.М.Маммадов, Т.Ф.Мусаев. Баку 2008 (2-е изд., переработанное и дополненное) - 196 с., Карабахский конфликт: азербайджанский взгляд: Сборник/сост.: ИА REGNUM.-М.: Издательство «Еврона», 2006.-256с., <http://karabakh-doc.azerall.info/կայքում գետեղված «գրականությունը»>:

20. Տե՛ս 1966թ. դեկտեմբերի 16-ին ընդունված «Քաղաքացիական և քաղաքական իրավունքների մասին» և «Տնտեսական սոցիալական և մշակութային իրավունքների մասին» միջազգային դաշնագրերի 1-ին հոդվածը:

21. Տե՛ս ԼՂ ՊԱ. ֆ.1, ց.2, կ.28, պ.մ.330, թ.10-11: